

CROSSIMAGE

ԽԱՉՆԿԱՐ

(արեւելահայերեն տարբերակ)

(User's Guide)

«Խաչնկար» կոչվող այս ծրագիրը «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» խաղի տարատեսակն է, որտեղ ի հարկե դուք միլիոն չեք շահի, բայց փոխարենը կլրացնեք ձեր գիտելիքները հաճելի ժամանցով:

Ծրագրի օգտագործման համար տրամադրվում է 8 խաչնկար, որոնք հետագայում կարող են համալրվել:

SYSTEM REQUIREMENT

Ծրագրի օգտագործման համար համակարգչի առումով որեւէ սահմանափակում չկա, աշխատում է ներկայումս գործող windows-ի բոլոր տարբերակներով եւ պահանջում է ոչ մեծ հիշողություն, որը մատչելի է արդի բոլոր համակարգիչների համար: Այն ամբողջությամբ ինքնաբավ է եւ չի պահանջում որեւէ օժանդակ այլ ծրագիր:

ԽԱՉՆԿԱՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ծրագիրը աշխատացնելու համար սեղմեք “crimeast” icon-ը: Այն բացվում է ներածական էջով, որտեղ պետք է տրվի խաչնկարի համարը: Բացի այս բացատրականից այդ էջում կարող եք ընտրել էկրանի ձեր նախընտրած գույնը, հաջորդաբար սեղմելով “color” կոճակը, կամ վերադառնալ սեւ գույնին սեղմելով “black” կոճակը, իսկ այս բացատրականը տպելու համար սեղմեք “print”:

Այնուհետեւ մտցրեք խաչնկարի ձեր ընտրած համարը (1-8): Սեղմեք “Enter” կամ “start” կոճակը, անցնելու համար ծրագրի հիմնական էջին: (Տվյալ համարի խաչնկարի չգոյության դեպքում կստանաք “Crossimage number doesn't exist” գրությունը: Շարունակեք մուտք անել խաչնկարի ընդունելի համարը):

Արդյունքում էկրանին կհայտնվի նկարի դատարկ պատկերը բաժանված 64 (8x8) մասերի եւ միաժամանակ 16 հարց, յուրաքանչյուրը ունենալով 4 պատասխան (ABCD): Mouse-ով ընտրելով հարցը, պատկերին կհայտնվեն ABCD տառերը: Սեղմեք ձեր ընտրած պատասխանը: Շարունակեք նույնը կատարել մյուս հարցերի համար:

Յարգերի ընտրության հերթականությունը կամայական է, բայց թելադրվում է նախ ընտրել այն հարցերը, որոնց պատասխաններին առավել վստահ եք:

Որեւէ ժամանակ, երբ նկատեք որ ձեր ընտրած պատասխանը չի համապատասխանում նկարին, mouse-ով սեղմեք նկարին չհամապատասխանող ուղղանկյունը եւ համապասխան գունավորված հարցից կրկին ընտրեք պատասխանը:

Այս ձեւով շարունակեք փոփոխել նկարը, մինչեւ էկրանին հայտնվի “Solved” գրությունը:

Բարի ժամանց:



Ծրագրի հեղինակ: Օնիկ Փիրումյան

Author: Onik Piroumian

Tel: (612) 9808 5795 - Email: piroum@ihug.com.au